



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2022թ. թիվ 747-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ  
ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4Ի ԹԻՎ 8-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի 26.10.2022թ. N 15 գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2003 թվականի փետրվարի 4-ի թիվ 8-Ա որոշմամբ հաստատված «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հանել 40-րդ կետը,

2) հանել 11-րդ կետի «ը/» ենթակետը,

3) 11-րդ կետի «թ/» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«թ/ պատրաստում և հրատարակում է ուղեցույցներ, կատալոգներ, ինչպես նաև կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկատվական ու գովազդային նյութեր.»:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը:

3. Հանձնարարել «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

Հ Հ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

04/11/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. նոյեմբերի 4  
ք.Վանաձոր

Հաստատված է  
ՀՀ Լոռու մարզպետի  
2022թ. նոյեմբերի 4-ի  
թիվ 747-Ա որոշմամբ

Կազմված է «\_\_\_» «\_\_\_\_\_» 2022թ.

Բաղկացած է 1 թերթից  
Տպագրված է 2 օրինակից  
Օրինակ \_\_\_

Գրանցված է  
ՀՀ իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրի Վանաձորի  
տարածքային բաժնի կողմից  
գրանցման ամսաթիվ՝ 10.02.2003թ.  
գրանցման թիվ՝ 26.210.0211  
վկայականի թիվ՝ 03Ա-058598  
ՀՎՀՀ՝ 06914498

10.02.2003թ. գրանցված կանոնադրության  
թիվ 02.03 փոփոխությունը գրանցված է  
ՀՀ իրավաբանական անձանց պետական  
ռեգիստրի գործակալության կողմից

«\_\_\_» «\_\_\_\_\_» 2022թ.

## **«ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ»**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. հանել 40-րդ կետը,
2. հանել 11-րդ կետի «ը/» ենթակետը,
3. 11-րդ կետի «թ/» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«թ/ պատրաստում և հրատարակում է ուղեցույցներ, կատալոգներ, ինչպես նաև կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկատվական ու գովազդային նյութեր.»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված 10.02.2003թ.) անբաժանելի և բաղկացուցիչ մասը: